ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հոկտեմբերի 2013 թվականի թիվ 130 -Ա

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Քաղաքացիական ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի պահանջներով, հիմք ունենալով < Եկամտային հարկի մասին> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2013թ. հոկտեմբերի 10-ի <Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություններ և լրացում կատարելուն համաձայնություն տալու մասին> N 871- Ա որոշումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ՝

1) պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի /ծածկագիր՝ 70-2.1-1/ անձնագրի 11-րդ կետի՝

ա. <թ> և <լբ> ենթակետերը հանել.

բ. <իժ> ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<իժ/ ապահովում է Մարզպետարանի Աշխատակազմի աշխատակիցների եկամտային հարկի հաշվետվությունները լիազոր մարմին ներկայացնելու աշխատանքները>.

2) հաշվապահական հաշվառման բաժնի՝

ա. վարիչի քաղաքացիական ծառայության պաշտոնի /ծածկագիր՝ 70-2.2-17/ անձնագրի 11-րդ կետի <ը> ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<ը/ վարչության պետին է ներկայացնում Մարզպետարանի Աշխատակազմի աշխատակիցների եկամտային հարկի հաշվարկման հաշվետվություններ.>,

բ. առաջին կարգի մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի /ծածկագիր՝ 70-4.1-27/ անձնագրի 11-րդ կետի <զ> ենթակետը հանել, <ե> ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր< $ե^1$> ենթակետ.

<$ե^1$/ էլեկտրոնային տարբերակով հարկային մարմին է ներկայացնում նոր աշխատողի համար գրանցման հայտ, եկամտային հարկի ամփոփ հաշվարկ.>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2013թ. հոկտեմբերի 24
ք.Իջևան